



ԱՌԱՋՈՐԴԱՐԱՎԸ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՐԱՆԳԻԵՐՈՒ ԱՐԵՒՏԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: info@westernprelacy.org Website: www.westernprelacy.org



ՄՈՆԹԵՊԵԼԼՈՅԻ ՆԱՐԱՆԳԱԿԱՑ ՅՈՒՉԱՐՁԱՆԻՆ ԱՌՁԵՒ

ԿԸ ՍՊԱՍԵՆՔ, ՈՐ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՐԱՆԳՆԵՐ ՈՒ ԱՉԱՏ ԱԾԽԱՐՁԸ ԿԱՆԳՆԻՆ ՄԵՐ ԱՐԴԱՐ ԴԱՏԻՆ ԿՈՂՔԻՆ

ՅԱՅՏԱՐԱՐԵՅ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՒ

Յոս ենք, ցոյց տալու, որ կը յիշենք մեր մեկ ու կես միլիոն նահատակները, մեր արդար իրաւունքները: Յոս ենք ըսելու, որ չենք մոռցած մեր կորուստներն ու կը մնանք պահանջատեր, արդարութիւն կը պահանջենք աշխարհէն, կը սպասենք, որ ազատ աշխարհի երկիրները, որոնք մարդկային իրաւունքներու պաշտպան են, Միացեալ նահանգներն ու այլ դրօշակիրներ կանգնին մեր իրաւունքներուն կողքին, կանգնին արդարութեան կողքին, յայտարարեց Ն.Ս.Օ.Ս.Ս. Արամ Ա. Կաթողիկոս, Մոնթեպելլոյի մեջ կանգնած նահատակաց Յուշարձանի ծածկին տակ, Շաբաթ, 8 Յոկտեմբերի առաւօտուն: Վեհափառ Յայրապետը, ինչպես նախընթաց հովուապետական այցելութեանց ընթացքին, առաջնահերթութեանց կարգին դասած եր Յեղասպանութեան զոհ նահատակներու Յուշարձան այցելութիւնը, գործնապես շեշտադրելու համար, որ այս այցելութեան գլխաւոր նպատակներն մեկն է լուսարձակի տակ բերել մեր Դատն ու խրախոյս հանդիսանալ անոր արդար լուծման աշխատանքներուն:

Նորին Ս. Օծութեան այցելութիւնը խորհրդանշական իմաստ ուներ: Ուխտաւոր Վեհափառ Յուշարձան հասաւ առաւօտեան ժամը 10ին, ընկերակցութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Սուշեղ Արք. Մարտիրոսնեանի, Արեւելեան Թեմի Առաջնորդ Բարձր. Տ. Օշական Արք. Զօլոյեանի եւ գաւազանակիր Յոգշ. Տ. Մեսրոպ Վրդ. Սարգիսեանի: Ներկայ էին Մոնթեպելլոյի քաղաքապետ Արթ Պրահաս եւ քաղաքապետական խորհուրդի անդամներ՝ Պիլ Մոլինըրի ու Ալպերթ Փերեզ, նաեւ խումբ մը ազգայիններ, որոնք եկած էին ուխտակից ըլլալու Յոգեւոր Առաջնորդներուն: Անոնց շարքին էին Յոգեւորականաց Դասու անդամներ, Ազգ. Կեդրոնական Վարչութեան, Թեմիս Ազգային Վարչութեան, Յ.Յ.Դ. Արեւմտեան Միացեալ նահանգներու Կեդրոնական Կոմիտէ ներկայացուցիչ Տիար Աւետիք Իզմիրլեան, Բիլոյի նախկին անդամ Տիար Վիգեն Յովսեփեան, Յայ Դատի ու Ազգ. Առաջնորդարանի

յանձնախումբերու Ներկայացուցիչներ, Ս. Խաչ Մայր Տաճարի ժողովականութեան, կազմակերպութեանց ու միութենական Ներկայացուցիչներ եւ մամլոյ թղթակիցներ:

Յուշարձան գմբեթին տակ, Վեհափառ Հայրապետը առաջնորդեց հոգեհանգստեան արարողութիւնը, աղօթքով խոնարհելով »ցեղասպան Թուրքիոյ կողմէ սպանուած« մեր մեկ ու կես միլիոն նահատակներուն յիշատակին առջեւ ու ծաղկեպսակ մը գետեղելով Յուշարձանին:

Արարողութենեն ետք, արտասանուեցան ողջոյնի խօսքեր, որոնց հետեւեցաւ Վեհափառին պատգամը: Ս. Խաչ Մայր Տաճարի ժողովականութեան ու Մոնթեպելլոյի կազմակերպութեանց, միութեանց ու ազգային վարժարանին անունով, ողջոյնի խօսք արտասանեց Տիար Նազարեթ Ծատուրեան. ան մեծ պատիւ համարեց այս քաղաքին մեջ, աշխարհի տարածքին հանրութեան պատկանող միակ կալուածին վրայ կանգնած Յուշարձանին առջեւ ողջունել Վեհափառ Հայրապետը, հաստատելով, որ այս հաւաքը կը խորհրդանշէ ուխտի վերանորոգում ու արդար իրաւունքներու հետապնդման հզօրացում: Ան անդրադարձաւ նաեւ հիվուապետական այցելութեան նպատակներէն՝ Հայ Դպրոցին զօրակցութեան առաջադրանքին, ու մասնաւորեց շրջանի Ազգ Մեսրոպեան վարժարանը, որ կը վայելէ գաղութին ու ազգային իշխանութեանց գորգուրանքը. ան մաղթեց, որ Վեհափառ Հայրապետին այս առաջադրանքը կենսագործուի արդար կերպով:

Ողջոյնի հակիրծ խօսք մը արտասանեց քաղաքապետ Պարահաս, պատիւ համարելով Հայրապետին Ներկայութիւնը:

Պատասխանելով քաղաքապետին խօսքերուն, Վեհափառ Հայրապետը յայտարարեց, թէ իր ու ուխտաւորներուն ներկայութիւնը ցուցանիշ է, որ կը յիշենք մեր նահատակները, չենք մոռցած ու չենք կրնար մոռնալ զանոնք, ոչ ալ մեր ազգային իրաւունքներն ու արդար Դատը: »Յիշատակել՝ կը նշանակէ հաւատարիմ մնալ նահատակներու ժառանգութեան ու պատգամին. յիշել՝ կը նշանակէ արդարութիւն պահանջել մարդկային ու հողային կորուստներուն դիմաց. պահանջը հասցեագրուած է Թուրքիոյ ու այլ կառավարութեանց, որովհետեւ Յեղասպանութիւնը կը սահմանուի իբրեւ մարդկութեան դէմ ոճիր, ու մեր ակնկալութիւնն է որ ազատ աշխարհի երկիրները, ի շարս որոնց Միացեալ Նահանգներ յանձնառու ըլլան մարդկային իրաւունքներու եւ արդարութեան իրենց սկզբունքներուն, իրենց դաւանած մարդկային արժեքներուն, ու զօրակցին հայութեան Դատին ու արդար իրաւունքներուն«, շեշտեց Վեհափառ Հայրապետը: Ան ըսաւ, որ Անթիլիասի առաքելութեան մաս կը կազմէ յիշել ու յիշեցնել 97 տարի առաջ գործուած ոճիրն ու անարդարութիւնը, հաւատարիմ մնալ նահատակներու կտակին եւ Թուրքիոյ ու աշխարհին ներկայանալ պահանդատերի կեցուածքով: Վերջապէս, ան բարձր գևահատեց Հայ Դատի մարմիններուն, յատկապէս Միացեալ Նահանգներու մարմիններուն կողմէ ի գործ դրուած աննահանչ աշխատանքը, որ բոլոր նահանգներուն մեջ կը յուշէ մեր արդար Դատը եւ մեր Դատին կողքին կը շահի արդարութեան հաւատացողները: Վեհափառ Հայրապետը Եգրափակեց ընդգծելով, որ Յուշարձանին առջեւ այս համախմբումը առիթ է ուխտի վերանորոգման ու նահատակներուն կտակին

հաւատարմութեան արտայայտութեան: Ան օրինեց ներկաներն ու Միացեալ Նահանգները:

Ուխտազնացութիւնը աւարտին հասաւ »Կիլիկիա«ի ու Հայաստանի Թայլերգին եղացողութեամբ:

HIS HOLINESS CATHOLICOS ARAM I VISITS THE ARMENIAN GENOCIDE MARTYRS MONUMENT IN MONTEBELLO

On the morning of Saturday, October 8, 2011 His Holiness Catholicos Aram I visited the Armenian Genocide Martyrs Monument in Montebello where he led a requiem service in memory of the 1.5 million martyrs of the Genocide.

His Holiness was accompanied by H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, H.E. Archbishop Oshagan Choloyan, Prelate of the Eastern United States, and staff bearer Very Rev. Fr. Mesrob Sarkissian. Montebello Mayor the Honorable Art Barajas and Council members William Molinari and Alberto Perez also participated in the service. A delegation comprised of Clergy, Central Executive and Executive Council members, ARF Central Committee Chair Mr. Avedik Izmirlian, former Bureau member Dr. Viken Hovsepian, ANC and Prelacy Committees' members, Holy Cross Cathedral Board and Delegates, representatives of sister organizations, and media were also in attendance.

His Holiness led a requiem service at the foot of the Monument and lay a wreath in memory of the martyrs.

On behalf of the Holy Cross community, remarks were delivered by Mr. Nazareth Sadorian who stated that it was a great honor to receive His Holiness at the Monument, and that the visit serves to renew and reinvigorate in all those present their pursuit of the Armenian Cause.

Mayor Brajas also welcomed His Holiness to the community, stating that his presence among them was a great honor.

In his message, His Holiness announced that their presence at the Monument is an affirmation that we will never forget our martyrs and we will never forget our cause and our rights. Remembering means remaining faithful to the legacy of our martyrs, demanding justice for the loss of life and land, said His Holiness, and continuing said that it is our expectation that all the free nations of the world, among them the United States of America, stay true to their principles of human rights and justice for all by standing behind the Armenian Cause for truth, justice, and rights. His Holiness also stated that remembering and raising awareness of the Genocide and injustices committed 97 years ago forms a large part of the mission of the Catholicosate, as does standing up for our rights to Turkey and the world. His Holiness highly commended the work of the ANCA in raising awareness and bringing recognition to our cause, and in conclusion stressed that the day's pilgrimage to the Monument should serve as an opportunity to renew our pledge to remain allegiant to the legacy of our martyrs and our cause. His Holiness then blessed the attendees and the United States of America.

The day came to a close with the singing of the Cilician and Armenian national anthems.